

Ենթահավելված 1

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ի Հավելված 20-ի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԸ

Բ Ա Ժ Ի Ն 1

ՆԱԽԱԲԱՆ (3-5 էջ)

Գ Լ ՈՒ Խ 1 ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ (1-2 էջ)

1. Ներկայացվում է ներդրումային ընկերության կառավարման մարմնի դիրքորոշումը նախորդ մեկ տարում ներդրումային ընկերության փաստացի (բացառությամբ՝ ներդրումային ընկերության ստեղծման լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության) և պլանավորվող ժամանակաշրջանում հնարավոր զարգացումների ու ընդհանուր ռազմավարության վերաբերյալ:

Սույն փաստաթղթում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

- Օրենք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք
- Ներդրումային ընկերություն կամ ՆԸ՝ «ԱՌՖԻ» փակ բաժնետիրական ընկերություն,
- Հարթակ՝ Ներդրումային ընկերության կողմից կառավարվող քրաուդֆանդինգի հարթակ, որն ունի ՀՀ Կենտրոնական բանկի 4/07 կանոնակարգով սահմանված նշանակությունը,
- Քրաուդֆանդինգի ծառայություն՝ քրաուդֆանդինգի հարթակի միջոցով նախագծերի ֆինանսավորման նպատակով արժեթղթերում ներդրողների և դրանց թողարկողների հանդիպման միջոցի տրամադրում, որը բաղկացած է ՀՀ Կենտրոնական բանկի 4/07 կանոնակարգում նկարագրված ծառայություններից,
- Քրաուդֆանդինգի առաջարկ՝ քրաուդֆանդինգի հարթակի միջոցով իրականացվող արժեթղթերի հրապարակային առաջարկ, որը ներառում է քրաուդֆանդինգի հարթակում հրապարակված նախագծերի վերաբերյալ ներդրումային որոշում կայացնելու համար սույն կանոնակարգով նախատեսված և այլ անհրաժեշտ տեղեկությունները:



- Ներդրող՝ Ներդրումային ընկերության կողմից ապահովվող բրաուզֆանդինգի հարթակում հրապարակված բրաուզֆանդինգի առաջարկներում ներդրում իրականացնող անձ՝ պարտքային կամ բաժնային ֆինանսական գործիքների միջոցով,
- Թողարկող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձ, որը բրաուզֆանդինգի առաջարկի միջոցով արժեթղթերի թողարկմամբ ֆինանսավորում է կամ նախատեսում է ֆինանսավորել իր նախագիծը,
- ԱՆԻՖ՝ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերություն, որը հանդիսանում է Ներդրումային ընկերության միակ սեփականատերը,
- Հաճախորդ՝ ներդրողները և թողարկողները, որոնք օգտվում են Ներդրումային ընկերության կողմից մատուցված բրաուզֆանդինգի ծառայությունից կամ որոնք դիմել են ՆԸ-ի բրաուզֆանդինգի ծառայությունից օգտվելու նպատակով:

Սույն փաստաթղթում նկարագրված է ՆԸ գործարար ծրագիրը՝ ՆԸ պաշտոնական գրանցման պահից (2022թ. առաջին կիսամյակ) մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Գործարար ծրագրում ներկայացվում են ՆԸ-ի ստեղծման և գործունեության առաքելությունը, պլանավորվող ժամանակաշրջանի համար մշակված զարգացման հիմնական ուղղությունները և դրանց իրագործմանն ուղղված նպատակներն ու խնդիրները:

ՆԸ-ն գործարար ծրագրով սահմանված ժամանակաշրջանում նախատեսում է գործարկել և կառավարել «ԱՌՖԻ» ներդրումային բրաուզֆանդինգի հարթակ՝ որպես վերջինիս օպերատոր:

Քրաուդֆանդինգը նորագույն տեխնոլոգիական լուծումների վրա հիմնված ֆինանսական ծառայություն է, որը հրապարակային եղանակով «հանրությունից» (պոտենցիալ ներդրողներից) նախագծերի ֆինանսավորման նպատակներով ֆինանսական ռեսուրսների ներգրավումն է: Այն այլընտրանքային ֆինանսավորման հարթակ է, որի միջոցով կապ է հաստատվում ֆինանսական ռեսուրսների պահանջարկ և առաջարկ ունեցող անձանց միջև¹: Քրաուդֆանդինգի ծավալները տարեցտարի աճում են և կանխատեսվում է, որ 2021-2026թթ. բրաուզֆանդինգի համաշխարհային շուկայի տարեկան աճը կկազմի միջինում 16 տոկոս²:

Հաշվի առնելով ՆԸ-ի կողմից մատուցվելիք ծառայությունների առանձնահատուկ բնույթը և ՀՀ-ում նմանատիպ ծառայությունների մատուցման գործում առաջամարտիկ լինելու հանգամանքը, գործարար ծրագրով սահմանված ժամանակահատվածում ՆԸ ռազմավարական նպատակները հիմնականում ներառում են նորագույն ծրագրային ապահովման համակարգերի և միջազգային լավագույն փորձի ներդրումն ու կիրառումը, ինչպես նաև ներդրումների իրականացման նոր մշակույթի ձևավորումը: Ընդ որում, պետք է նշել, որ ՆԸ-ն նախատեսում է հարթակի միջոցով տրամադրել ներդրումային բրաուզֆանդինգային ֆինանսավորում պարտքային և բաժնային մասնակցությամբ՝ համալրված հնարավոր նվիրատվության և պարգևատրման բրաուզֆանդինգի բաղադրիչներով: ՆԸ-ն նախատեսում է մինչև հարթակի գործարկումը լայնամասշտաբ մարքեթինգային արշավի միջոցով իրազեկել պոտենցիալ ներդրողներին և ՀՀ-ում գործող

¹ 2020 թվականի վերջի դրությամբ բրաուզֆանդինգի համաշխարհային շուկան գնահատվել է 36 մլրդ ԱՄՆ դոլար, որից ներդրումային բրաուզֆանդինգը՝ 2,5 մլրդ ԱՄՆ դոլար, P2P վարկավորումը՝ 25 մլրդ ԱՄՆ դոլար ([Crowdfunding Statistics: Facts on the Latest Fundraising Craze \(fundly.com\)](https://www.fundly.com/crowdfunding-statistics))

² [80 Crowdfunding Statistics You Must See: 2021 Platforms, Impact & Campaign Data - Financesonline.com](https://www.financesonline.com/80-crowdfunding-statistics-you-must-see-2021-platforms-impact-campaign-data/)



ընկերություններին նոր ֆինանսական ծառայությունների մասին, ինչպես նաև շարունակել կրթական նյութերի հրապարակումը գործարկվելուց հետո:

Գ Լ ՈՒ Խ 2

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ (1,5-2 էջ)

2. Ներկայացվում են ներդրումային ընկերության մասին ընդհանուր տեղեկություններ, այդ թվում՝ ներդրումային ընկերության հիմնադրման ամսաթիվը (բացառությամբ՝ լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության), կազմակերպական-իրավական ձևը, մասնաճյուղերի թիվը և աշխարհագրական տեղաբաշխումը, հայեցողությամբ՝ այլ տեղեկատվություն: Ներկայացվում է ներդրումային ընկերության կառուցվածքը սխեմատիկորեն (1 էջ):

ՆԸ-ի ստեղծման հիմնական նպատակը ներդրումային քրաուդֆանդինգի առցանց հարթակի տրամադրումն է ՀՀ-ում գործունեություն ծավալող ձեռնարկատերերին նախագծերի ֆինանսավորման նպատակով հնարավոր ներդրողներից (հիմնականում արտերկրից) ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու համար: Հարթակի միջոցով ֆինանսավորում կարող են ներգրավել ինչպես ՏՏ ստարտափ ընկերություններն, այնպես էլ զարգացման որոշակի մակարդակում գտնվող փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ) իրենց գործող կամ նոր բիզնես գաղափարների համար: Իրենց հերթին ներդրողները հնարավորություն են ստանում անմիջականորեն՝ առանց միջնորդների ներդրումներ կատարել տարբեր բիզնես նախագծերում, վստահ լինելով դրանց իրավական ապահովության մեջ, քանի որ դրանք արդեն իսկ անցել են հատուկ զննում (due diligence) հարթակի օպերատորի՝ ՆԸ-ի կողմից: Պետք է նշել, որ հարթակի միջոցով հեռանկարային բիզնես նախագծերում ներդրումներ կատարելու հնարավորություն է ստեղծվելու հատկապես փոքր գումարներով ներդրումներ կատարելու մտադրություն ունեցող անձանց համար (սկսած 45 հազար ՀՀ դրամից), ինչի բացը թերևս ներկա պահին առկա է ՀՀ-ում:

Առցանց հարթակի հիմնական նպատակն է վերացնել ՀՀ-ում նոր բիզնես նախագծերի համար սկզբնական ֆինանսավորման ներգրավման խոչընդոտները՝ նպաստելով ՀՀ տնտեսության վրա դրա առավելագույն ազդեցության ապահովմանը: Առցանց հարթակն իր պարզ կառուցվածքով և նորագույն տեխնոլոգիաներով հագեցվածության շնորհիվ ծառայելու է որպես միջոցների ներգրավման և ներդրումների իրականացման մատչելի և արագ հնարավորություն: Մասնավորապես, ձեռնարկատերերին (թողարկողներին) հարթակի միջոցով ֆինանսավորում ստանալու համար անհրաժեշտ է լինելու.

1. Գրանցվել հարթակի օպերատորի ինտերնետային կայքում՝ լրացնելով ընկերության մասին համառոտ հարցաշար: Հարթակի օպերատորը ավտոմատ կերպով հաստատում կամ մերժում է ընկերության գրանցումը հարցաշարի հիման վրա:
2. Անցնել հատուկ զննում հարթակի օպերատորի գործունեության կանոնների և ներքին ընթացակարգերի համաձայն՝ տրամադրելով պահանջվող տեղեկատվությունը:
3. Վերբեմնել քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը:
4. Տրամադրել բանկային հաշվի տվյալները, որին փոխանցվելու են հարթակի օպերատորի կանոնների համաձայն քրաուդֆանդինգի առաջարկի արդյունքում ներդրողներից ներգրավված միջոցները:



5. Քրաուդֆանդինգի հարթակում հրապարակվող նախագծի՝ Օրենքի և ԿԲ կանոնակարգերի պահանջներին բավարարող գովազդը,
6. Հարթակի օպերատորի կանոններով պահանջվող անհրաժեշտ այլ տեղեկություններ:

ՆԸ կողմից վերը նշված ցանկը կարող է պահանջվել մաս-մաս՝ վերջնական ցանկը ստանալով միայն նախագծի հաստատման պարագայում:

Իր հերթին ներդրողին ներդրումներ իրականացնելու համար անհրաժեշտ է լինելու.

1. Գրանցվել հարթակում և անցնել «Ճանաչիր քո հաճախորդին» (KYC) զննում,
2. Լրացնել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողի ստուգման թեստ, որն առնվազն ներառում է հաճախորդի ներդրումային գիտելիքների, փորձի, ներդրումային նպատակների, ֆինանսական վիճակի, հիմնական ներդրումային ռիսկերի ընկալման վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ հաճախորդի կողմից արժեթղթերում նախկինում իրականացված ներդրումների մասին:
3. Ծանոթանալ քրաուդֆանդինգի ներդրման ռիսկերը նկարագրող փաստաթղթին:
4. Ընտրել քրաուդֆանդինգի առաջարկը և կատարել ներդրում:

ՆԸ-ն ստեղծվելու է Փակ Բաժնետիրական Ընկերություն կազմակերպարական տեսքով և համաձայն ՀՀ օրենսդրության՝ իրականացնելու է ինչպես հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, այնպես էլ արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում: Ընկերության գրասենյակը գտնվելու է ք. Երևանում, Հանրապետության 37 հասցեում: Գործարար ծրագրով սահմանված ժամանակահատվածում մասնաճյուղերի առկայություն չի նախատեսվում: Կազմակերպության հիմնական բաժնետերն է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդը» ՓԲԸ-ն, որի կադրային ներուժի, ինչպես նաև փորձառության վրա է հիմնվելու նոր ստեղծվող ՆԸ-ն:

ՆԸ եկամուտը ձևավորվելու է հետևյալ աղբյուրներից.

1. **միջնորդավճար՝** հաջողությամբ իրականացված գործարքի դիմաց: (նախատեսվում է գանձել 9% միջնորդավճար հարթակի միջոցով ներգրավված ֆինանսական ռեսուրսների դիմաց: Մասնավորապես՝ յուրաքանչյուր ներդրումային նախագծի դիմաց, որի համար իրականացված ներդրումները հատել են կամ անցել են ֆինանսավորման պլանավորված մակարդակը, Հարթակի օպերատորը Կանոնակարգ 4/23-ի պահանջներին բավարարող հատուկ բանկային հաշվին փոխանցած ներդրողների միջոցների 91%-ը փոխանցում է թողարկող ընկերության բանկային հաշվին, այսպիսով՝ գանձելով 9% միջնորդավճար մատուցված ծառայությունների դիմաց): Նշված միջնորդավճարից մոտ 2% ուղղվելու է ներդրողների կողմից վճարային քարտերով կատարված գործարքների գծով սպասարկող առևտրային բանկից գանձվող վճարներին
2. **սկզբնական վճար՝** հարթակում ներդրումային նախագծի ներկայացման դիմաց: (Նախատեսվում է գանձել հաստատուն վճար հարթակի միջոցով ներկայացվող յուրաքանչյուր նախագծի համար), որը հարթակի գործարկման սկզբնական շրջանում չի գանձվի:
3. **վճար՝** ռեսուրսի վարման գծով ծառայությունների դիմաց, որը, ՆԸ-ը, որպես հաշվի օպերատոր, կգանձի հարթակի հաճախորդ ընկերություններից:



4. **տուգանք**, որը ՆԸ-ը կգանձի թողարկող ընկերությունից ներդրումային նախագծի վաղաժամկետ դադարեցման արդյունքում, ինչպես նաև թողարկողի կողմից սխալ տեղեկատվության տրամադրման և խախտումների բացահայտման դեպքում:

Եկամտի նշված աղբյուրների գոյացած միջոցներն ուղղվելու են հարթակի անխափան աշխատանքի ապահովմանն ու տեխնիկական, ինչպես նաև գիտելիքային ներուժի վերազինմանը:

Գ Լ ՈՒ Խ 3

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ (0,5-1 էջ)

3. Ներկայացվում են ներդրումային ընկերության գործարար ծրագրի մշակման հիմքում դրված հիմնական ենթադրությունները, մշակող անձի կամ մշակման աշխատանքները կոորդինացնող անձի վերաբերյալ տվյալները (գրադեցրած պաշտոնը և հեռախոսի համարը):

ՆԸ-ն գործարար ծրագիրը մշակելիս հիմնվել է հետևյալ հիմնական ենթադրությունների վրա՝

1. Հայաստանում ներդրումային քրաուդֆանդինգն ունի զարգացման մեծ պոտենցիալ՝ հաշվի առնելով շուկայի մասնակիցների կարծիքներն ու ուսումնասիրությունները:
2. ԿԲ կողմից կարգավորման դաշտը կշարունակի մնալ առավելագույնս թույլ ռեժիմով՝ հաշվի առնելով ոլորտի կարևորությունը կապիտալի շուկայի զարգացման համար:
3. ՆԸ կանոնադրական կապիտալը ստեղծման պահին կազմելու է 70 մլն ՀՀ դրամ:
4. Առաջին երեք տարիների ընթացքում ԱՌՖԻ հարթակով կիրականացվեն մոտ 50 հաջողված ֆինանսավորում՝ ընդհանուր մոտ 5 մլն ԱՄՆ դոլար ծավալով:
5. Կանխատեսվող ժամանակահատվածում Ներդրումային ընկերության հիմնադիրը կֆինանսավորի ՆԸ հիմնական աշխատակիցների, գրասենյակային և մարքեթինգային ծախսերի գերակշիռ մասը:

Գործարար ծրագրի մշակման աշխատանքները համակարգել է «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» ՓԲԸ ԱՌՖԻ հարթակի նախագծերի ղեկավար Էդգար Էվոյանը (հեռախոսահամար +374 93 466630):

Բ Ա Ժ Ի Ն II

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (2-4 էջ)

Գ Լ ՈՒ Խ 4

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ (0.5 էջ)

4. Ներկայացվում է ներդրումային ընկերության առաքելությունը՝ հեռանկարային նպատակը, որի համար գոյություն ունի ներդրումային ընկերությունը: Առաքելությունը պետք է արտացոլի ներդրումային ընկերության՝ երկարաժամկետ կտրվածքով դերը, տեղը և առանձնահատկություններն արժեթղթերի շուկայում:



ՆԸ առաքելությունն է նպաստել ՀՀ տնտեսության զարգացմանը քրաուդֆանդինգային ֆինանսավորման հարթակի ներդրման և գործարկման միջոցով, որի օգնությամբ ՀՀ-ում գործունեություն ծավալող ստարտափերը և ՓՄՁ-ները կկարողանան ներգրավել ֆինանսական ռեսուրսներ մեծաթիվ մանր և խոշոր ներդրողներից եկամտաբեր նախագծերի ֆինանսավորման նպատակով:

Նշված առաքելության իրագործման շրջանակներում և համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի ՆԸ-ն նախատեսում է իրականացնել հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, ինչպես նաև արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում, հաշվի օպերատորի միջոցով ընկերությունների ռեեստրի վարում:

Գ Լ ՈՒ Խ 5 **ՆՊԱՏԱԿՆԵՐԸ** **(0,5-1 էջ)**

5. Նշվում են ներդրումային ընկերության կողմից ընդունված միջնաժամկետ նպատակներն ըստ առաջնահերթության: Նպատակները կարող են լինել և՛ քանակական, և՛ որակական, և՛ ընդհանրական, սակայն իրատեսական և դրանց կատարման արդյունքների տեսանկյունից՝ գնահատելի (չափելի): Նպատակները պետք է արտացոլեն ներդրումային ընկերության միջնաժամկետ կտրվածքով դերը և տեղը, ինչպես նաև նրա առանձնահատկություններն արժեթղթերի շուկայում:

6. Ներկայացվում է սույն գլխում նշված նպատակների ընտրության հիմնավորումը: Եթե սույն ենթահավելվածի 5-րդ կետում նշված նպատակները վերանայվել են, ապա անհրաժեշտ է ներկայացնել դրանց վերանայման պատճառներն ու հիմնավորումը, եթե չեն վերանայվել՝ նպատակների՝ նույնը մնալու հիմնավորումը (բացառությամբ՝ ներդրումային ընկերության ստեղծման լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության):

ՆԸ-ի առաքելության հասնելու ճանապարհին դրված հիմնական նպատակները հետևյալն են՝

1. Գործարկել հարմարավետ քրաուդֆանդինգի հարթակ՝ վերջինիս միջոցով Հայաստանում գործող ընկերությունների ֆինանսավորման գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով:
2. Կազմակերպել մարքեթինգային և առաջնության արշավներ ձեռնարկատերերի և ներդրողների ներգրավման, ինչպես նաև պոտենցիալ ներդրողների շրջանակում բիզնես գաղափարների գովազդի իրականացման համար:
3. Ներդնել միջազգային լավագույն փորձը հավուր պատշաճի ուսումնասիրության (due diligence) և «ճանաչիր քո հաճախորդին» (KYC) զննման գործընթացների կազմակերպման համար:
4. Հայաստանում առաջին անգամ կիրառել ֆինանսավորման նոր գործիքներ հարթակում ձեռնարկատերերի և ներդրողների շահերի ավելի արդյունավետ համընկնման նպատակով (մասնավորապես՝ ներկայումս ուսումնասիրվում են SAFE գործիքի իրավական կիրառման հնարավորությունները):



Գ Լ ՈՒ Խ 6

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (0,5-1 էջ)

7. Հակիրճ նկարագրվում են այն սկզբունքները, որոնցով առաջնորդվում է ներդրումային ընկերությունն իր քաղաքականությունն իրականացնելիս, այդ թվում՝ քաղաքականությունը հետևյալ ոլորտներում՝

- 1) հաճախորդների և գործընկերների հետ հարաբերություններում,**
- 2) ներդրումային ընկերության ղեկավարների և աշխատակիցների հետ հարաբերություններում,**
- 3) ներդրումային ընկերության ցանկությամբ՝ այլ ոլորտներում:**

ՆԸ-ն հաճախորդների հետ հարաբերություններում առաջնորդվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներով՝ բացառելով հնարավոր շահերի բախումը, ինչպես նաև պահպանելով և կիրառելով այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝

- հաճախորդի շահերի գերակայությունը,
- բարեխղճությունը,
- օրինականությունը,
- արհեստավարժությունը,
- փոխհամագործակցությունը, և այլն:

ՆԸ-ի ղեկավարների և աշխատակիցների հետ փոխհարաբերություններն առաջնահերթ կարգով հիմնվում են ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարման վրա: «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՆԸ-ն պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ներդրումային ծառայությունները մատուցվեն համապատասխան որակավորում ստացած աշխատակիցների միջոցով:

Ի լրումն վերոնշյալ սկզբունքների՝ ՆԸ-ն նախատեսում է նաև ներդնել կորպորատիվ կառավարման սկզբունքներ՝ երաշխավորելու համար միջազգային չափանիշների համապատասխան փոխհարաբերություններ ինչպես ընկերության ներսում, այնպես էլ հաճախորդների և գործընկերների հետ:

Գ Լ ՈՒ Խ 7

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (0,5-1,5 էջ)

8. Բնութագրվում է ներդրումային ընկերության հիմնական գործառնությունների և ծառայությունների ոլորտը՝ պլանավորվող ժամանակաշրջանի համար: Մասնավորապես՝

- 1) գործունեության մեջ զգալի ծավալ կազմող գործարքների և ծառայությունների տեսակները և/կամ ենթատեսակները,**
- 2) ֆինանսական ծառայությունների շուկայի նպատակային հատվածներն ըստ տնտեսության ոլորտների,**
- 3) հաճախորդների հիմնական խմբերն ըստ տարածաշրջանների, ռեզիդենտության, իրավական կարգավիճակի և/կամ այլ չափանիշների:**

ՆԸ-ի հիմնական գործունեությունը ենթադրելու է բիզնես գաղափարների ֆինանսավորման գործընթացի կազմակերպում, որի մեջ զգալի ծավալ կազմող ծառայությունների թվում են լինելու առցանց եղանակով ֆինանսավորման կազմակերպումը, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրանցման աջակցումը:



ՆԸ-ի կողմից թիրախավորվելու են հիմնականում հետևյալ ոլորտներում գործունեություն ծավալող ստարտափերը և գործող ձեռնարկությունները.

- 1) Գյուղատնտեսություն,
- 2) Արդյունաբերություն,
- 3) Չքոսաշրջություն,
- 4) Բարձր տեխնոլոգիաներ և պաշտպանություն,
- 5) Առողջապահություն:

Ներդրողների տեսանկյունից բացի ՀՀ-ից բացի թիրախավորվելու են օտարերկրյա անհատ և ինստիտուցիոնալ ներդրողները՝ հիմնականում հայկական սփյուռքի ներկայացուցիչները: Ներդրումներն ակնկալվում են հիմնական հայաշատ տարածաշրջաններից՝ ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, ԵՄ:

Բ Ա Ժ Ի Ն III

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ (2-4 էջ)

Գ Լ ՈՒ Խ 8

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ (1,5-3 էջ)

14. Նկարագրել ներդրումային ընկերության արտաքին միջավայրում ներդրումային ընկերության կողմից կանխատեսվող հիմնական այն երևույթները, փոփոխությունները և դրանց հետ կապված ռիսկերը, որոնց հետ ներդրումային ընկերությունը կարող է բախվել պլանավորվող ժամանակաշրջանում: Մասնավորապես՝

ա) միջազգային շուկաներում. նկարագրել միջազգային շուկաներում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք կարող են ազդել ներդրումային ընկերության գործունեության վրա:

բ) Ներքին տնտեսությունում. նկարագրել Հայաստանի Հանրապետության տնտեսությունում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրադարձությունները, որոնք կարող են ազդել ներդրումային ընկերության գործունեության վրա:

գ) Ֆինանսական շուկաներում. Նկարագրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային հատվածում տեղի ունեցող երևույթների վերաբերյալ սպասումները և դրանց հնարավոր ազդեցությունը ներդրումային ընկերության գործունեության վրա:

դ) Օրենսդրական (Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերի և պետական այլ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի) դաշտում:

15. Վերլուծությունը կատարել միայն վերոհիշյալ ոլորտներում ներդրումային ընկերության կողմից կանխատեսվող փոփոխությունները, երևույթները ներդրումային ընկերության գործունեության վրա ազդեցության տեսանկյունից՝ դիտարկելով դրանք որպես ներդրումային ընկերության գործունեության զարգացման հնարավորություններ կամ խոչընդոտներ, ռիսկեր, սպառնալիքներ: Խուսափել խիստ վերացական արտահայտություններից: Խուսափել երևույթներ նկարագրելուց՝ առանց ներկայացնելու ներդրումային ընկերության վրա դրա հնարավոր ազդեցությունը: Եթե նշված ոլորտներից որևէ մեկում զարգացումները ներդրումային ընկերության գնահատականներով չեն ազդելու նրա գործունեության վրա (օրինակ՝ միջազգային շուկաներում տեղի ունեցող երևույթները), ապա հակիրճ նշել դրա պատճառները:



ՆԸ-ն կանխատեսել է արտաքին միջավայրում տեղի ունեցող հետևյալ երևույթները, որոնք կարող են ազդել ՆԸ-ի գործունեության և մատուցվող ծառայությունների վրա.

- Քրաուդֆանդինգի միջազգային շուկաները վերջին տարիներին մեծ տարածում են գտել ողջ աշխարհում և շարունակում են հաջողությամբ իրականացնել բազմաթիվ բիզնես ծրագրերի ֆինանսավորումը: Միջազգային հայտնի հարթակները, ունենալով միջազգային ճանաչում և հարուստ փորձ, բիզնես գաղափարները հասանելի են դարձնում հնարավորինս մեծ թվով ներդրողների՝ ապահովելով ֆինանսավորում առավել մեծ ծավալներով և ավելի սեղմ ժամկետներում՝ սրանով իսկ առաջացնելով մրցակցային լուրջ խոչընդոտ հայաստանյան նորաստեղծ քրաուդֆանդինգային հարթակի համար: Ընկերությունները արտերկրում գրանցելու հետ կապված փաստաթղթային, իրավական և հարկային խոչընդոտների թուլացմանը զուգահեռ կավելանա հայկական ընկերությունների ներկայությունը օտարերկրյա քրաուդֆանդինգի հարթակներում:
- ՀՀ-ում գոյություն ունեցող քրաուդֆանդինգ հարթակները հիմնականում ունեն սոցիալական և հանրային ուղղվածություն՝ միտված հասարակության առաջ ծառացած բազմաթիվ սոցիալական խնդիրների լուծմանը: Հետևաբար, բիզնեսի ֆինանսավորմանն ուղղված հարթակի ստեղծումը կլինի նորույթ հայ հասարակության համար, ինչը թույլ կտա վերացնել ՀՀ-ում նոր բիզնես-նախագծերի համար ֆինանսական խոչընդոտները, քանի որ նոր ձևավորվող ընկերությունները հաճախ անհրաժեշտ միջոցների անբավարարության պատճառով չեն կարողանում իրենց գաղափարները ներկայացնել միջազգային հարթակներում:
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներդրումային քրաուդֆանդինգի կարգավորմանը զուգահեռ ակնկալվում է, որ Հայաստանում կհիմնվեն նոր քրաուդֆանդինգի հարթակներ՝ ստեղծելով մեծ մրցակցություն թե ներդրողների թե հատկապես ֆինանսավորվող ընկերությունների ներգրավման համար:
- ՀՀ ֆինանսական շուկաները ներդրումների իրականացման տեսանկյունից սահմանափակ են և հիմնականում առաջարկում են ավանդական բանկային ավանդների տեսքով ներդրումների իրականացում, ինչը համեմատաբար ոչ ռիսկային և սակայն նվազ եկամտաբեր ներդրումային հնարավորություն է առավել մեծ ռիսկի հակված ներդրողների համար:
- ՀՀ բանկային համակարգի կողմից ձեռնարկատերերին առաջարկվող ֆինանսավորման ավանդական տարբերակները համարվում են ռեսուրսների ներգրավման բավականին թանկ աղբյուրներ, ուստի առաջարկվող այլընտրանքային ֆինանսավորման քրաուդֆանդինգի հարթակը, առաջարկելով բավականին ցածր միջնորդավճարներ, կարող է դառնալ արագ և ոչ ծախսատար եղանակով ֆինանսական ռեսուրսների ներգրավման և փոխանցման արդյունավետ մեխանիզմ:
- Օտարերկրյա ներդրողների մուտքը կապիտալի շուկա հեշտացնելու համար ՀՀ-ն ունի նպաստավոր պայմաններ քրաուդֆանդինգի շուկան զարգացնելու և միջազգային ֆինանսական շուկաների մասնիկը կազմելու, որի համար հիմք է հանդիսանում մասնավորապես ՀՀ Կառավարության կողմից որդեգրված կապիտալի շուկայի զարգացման ծրագիրը, ինչպես նաև ՀՀ-ում ազատ դրամական միջոցների առկայությունը (այդ թվում՝ ավանդների տեսքով), որոնք խնայողությունից կարող են



փոխակերպվել բրաուզֆանդինգային ներդրումների: Ըստ ՀՀ Կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի որոշման՝ բրաուզֆանդինգ սխեմաների ներդրումը կարող է խթանել օտարերկրյա ներդրումները Հայաստանի կապիտալի շուկայում:

- ՀՀ-ն առանձնանում է վերջին տարիներին զարգացման կայուն և արագ աճ գրանցող ստարտափ և ՓՄՁ էկոհամակարգերով: Հայաստանյան ստարտափերի համար տեղական ֆինանսավորման աղբյուրները սահմանափակվում են լոկալ վենչուրային ընկերություններով և հրեշտակային ներդրողներով: Հայաստանյան ստարտափերը բավականին ակտիվ են նաև օտարերկրյա բրաուզֆանդինգային հարթակներում միջոցների ներգրավման գործում:
- Ինչ վերաբերում է ՓՄՁ-երին, ապա վերջիններիս համար ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում հիմնականում գրանտները, որոնք խիստ սահմանափակ են և բանկային վարկավորումը, ինչը բավականին ծախսատար է, իսկ ինչ վերաբերում է բաժնային ֆինանսավորմանը՝ այն գրեթե բացակայում է:
- Այս առումով տեղական բրաուզֆանդինգի հարթակը Էժան ռեսուրսների ներգրավման հնարավորություն կստեղծի հատկապես ՀՀ ՓՄՁ-ների համար, այդ թվում և կապիտալում բաժնային մասնակցության միջոցով, իսկ հայկական ստարտափերը կկարողանան իրենց բիզնես գաղափարները ներկայացնել տեղական բրաուզֆանդինգի հարթակի միջոցով:
- 2022թ-ի փետրվարին սկսված ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում տնտեսական պատժամիջոցների կիրառման ազդեցությունը ռուսական տնտեսության վրա առաջացնում է սպառնալիքներ և միևնույն ժամանակ ստեղծում հնարավորություններ ՀՀ տնտեսության և հայկական ձեռնարկությունների համար: Ռուսաստանյան սփյուռքը, որը ՆԸ-ն կարևորագույն թիրախային ներդրողն է հանդիսանում, կանխատեսվում է, որ պատժամիջոցների արդյունքում եկամուտների կրճատման հետևանքով կնվազեցնի ներդրումները ՀՀ տնտեսությունում, և հետևաբար կկրճատվեն ՆԸ-ն բրաուզֆանդինգի հարթակում կանխատեսված ներդրումները:
- Միևնույն ժամանակ, մի շարք ընկերությունների հեռացումը ռուսական շուկայից առաջարկի բաց է ստեղծել տնտեսության մի շարք ոլորտներում, որոնց մանրամասն ուսումնասիրության արդյունքում հայկական ձեռնարկությունները կարող են լրացնել այդ բացերը համապատասխան ապրանքների և ծառայությունների արտահանման միջոցով: Նոր ստեղծվող բրաուզֆանդինգի հարթակը կարող է միջոց հանդիսանալ ՌԴ արտահանման պոտենցիալ ունեցող եկամտաբեր նախագծերում ներդրումների իրականացման համար:



Գ Լ ՈՒ Խ 9

ԱՐՏԱՔԻՆ ՄԻԶԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
(0,5-1 էջ)

16. Գլուխ 11-ում կատարված վերլուծությունից վեր հանել և ամփոփ ներկայացնել արտաքին միջավայրում կանխատեսվող երևույթները որպես ներդրումային ընկերության համար հետագա զարգացման հնարավորություններ և զարգացմանը խոչընդոտող սպառնալիքներ, վտանգներ, ռիսկեր:

Հաշվի առնելով քրաուդֆանդինգային ենթակառուցվածքների ներդրման հետ կապված ՀՀ կառավարության դիրքորոշումը, ինչպես նաև նկատի ունենալով ՀՀ ֆինանսաբանկային համակարգի վերոնշյալ առանձնահատկությունները, ՆԸ-ի կողմից առաջարկվող քրաուդֆանդինգային հարթակը հավակնում է դառնալ ներդրումների ներգրավման և իրականացման գրավիչ և արդյունավետ միջոց հատկապես անհատ ներդրողների համար:

Ստարտափերի կողմից ներդրումների ներգրավման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներդրումները շատ հաճախ իրականացվում են հենց ստարտափ ինկուբատորների հետ համագործակցող հրեշտակային ներդրողների կամ վենչուրային ֆոնդերի կողմից: Բացի այդ, ստարտափերի կողմից շատ կարևորվում է իրենց միջոցները ստարտափին վստահած ներդրողների անունն ու համբավը: Այս առումով կա ռիսկ, որ առաջարկվող քրաուդֆանդինգային հարթակը կարող է լինել նվազ գրավիչ ստարտափերի համար հատկապես հարթակի գործունեության սկզբնական փուլում՝ հաշվի առնելով թիրախավորված ներդրողների շրջանակը:

Հաշվի առնելով նկարագրված ռիսկերը՝ քրաուդֆանդինգային մրցակցային շուկայում հաջողության հասնելու համար ՆԸ-ն նախատեսում է իրականացնել արդյունավետ մարքեթինգային և առաջնորդական քաղաքականություն նախապես թիրախավորված ձեռնարկատերերի և ներդրողների շրջանակներում: Բացի այդ ներկայումս քննարկումներ են ընթանում ՄԱԿ-ի IMPACTAIM աքսելերացիոն ծարգրի հետ համագործակցության, ինչպես նաև հարթակում ֆինանսավորում ստացող ընկերությունների համար կայուն զարգացման նպատակներին ազդեցության գնահատման հնարավորությունները:

ՆԸ նաև բանակցում է հայաստանյան լավագույն ծրագրավորման ընկերություններից մեկի հետ՝ նպատակ ունենալով ընդլայնել ծառայությունների շրջանակը և դիտարկել նաև գաղափարի փուլում գտնվող հայտեր:



Բ Ա Ժ Ի Ն IV

ՀԵՌԱՆԿԱՐԱՑԻՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ (4-7 էջ)

Գ Լ ՈՒ Խ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (1 էջ)

17. Ներկայացվում են պլանավորվող ժամանակահատվածում իրականացվելիք խնդիրները: Խնդիրները պետք է լինեն խիստ կոնկրետ և դրանց կատարման արդյունքների տեսանկյունից՝ գնահատելի (չափելի): Բոլոր խնդիրները պետք է ուղղված լինեն նպատակներին, բխեն նախորդ ժամանակաշրջանի խնդիրների կատարողականից, ներդրումային ընկերության թույլ և ուժեղ կողմերից, արտաքին հնարավորություններից և վտանգներից:

- Մշակել ընկերության գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտեր
- Մշակել մարքեթինգային և առաջնորման քաղաքականությունները
- Իրականացնել կադրերի արդյունավետ համալրում
- Եկամտի և շահույթի մակարդակների թիրախավորում և այլն
- Քրաուդֆանդինգի հարթակի շարունակական զարգացում (բջջային հավելված, վերջնահաշվարկի ավելի մատչելի հնարավորություններ և այլն)

Գ Լ ՈՒ Խ 11

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՃՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (3-6 էջ)

18. Ներկայացվում են պլանավորվող ժամանակահատվածում իրականացվելիք խնդիրների լուծման նախատեսվող ուղիները, ներդրումային ընկերության գործունեության կանխատեսվող արդյունքները: Ընտրված ուղիները պետք է համահունչ լինեն ներդրումային ընկերության կողմից արդեն վերլուծված և ներկայացված ներքին ուժեղ և թույլ կողմերին, արտաքին հնարավորություններին և սպառնալիքներին՝ ներկայացնելով թույլ կողմերից խուսափելու և ուժեղ կողմերի կիրառման հնարավորությունները խնդիրների լուծման մեջ:

19. Պլանավորվող ժամանակաշրջանում խնդիրների լուծման ուղիները ներկայացվում են ներդրումային ընկերության կողմից գործունեության հետևյալ կողմերով՝ տալով դրանց ընտրության հիմնավորում՝

ա) կապիտալիզացիայի ուղիները (կապիտալիզացիայի անհրաժեշտ և բավարար մակարդակի ապահովման համար իրականացվելիք միջոցառումների նկարագրությունը և դրանց իրատեսության հիմնավորումը, արտաքին աղբյուրներ, ներքին աղբյուրներ)։

բ) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունների գծով քաղաքականությունը. ծառայությունների կանխատեսվող ծավալները և դրանց կառուցվածքը, հաճախորդների նպատակային խմբերը և միջոցառումները՝ ուղղված շուկայի այդ հաճախորդների խմբերի գրավմանը և այլն.

գ) գործունեության կանխատեսվող ֆինանսական արդյունքները. եկամուտների և ծախսերի կանխատեսվող կառուցվածքը, շահույթ, շահութաբերության ցուցանիշների կանխատեսվող մակարդակները և դրանց հիմնավորումը, շահաբաժինների վճարման քաղաքականություն.



դ) կառավարման համակարգի կատարելագործման ուղիները.

ե) տարածաշրջանային քաղաքականություն (տարածքային ստորաբաժանումների տեղաբաշխում և վերակազմավորում).

զ) կադրային քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ.

է) ներդրումային ընկերության գործառնությունները և ծառայությունները. նախատեսված նոր ծառայությունները, գործիքները, տեխնոլոգիաները (ըստ հաճախորդների, տարածաշրջանների, շուկաների հատվածների, ոլորտների) և միջոցառումները՝ ուղղված դրանց ապահովմանը (դրանց ներդրման ռեսուրսների հիմնավորումը).

ը) մարկետինգային քաղաքականություն. ինչ մարկետինգային տեխնոլոգիաներ է կիրառելու կամ շեշտադրելու ներդրումային ընկերությունը պլանավորված գործունեությունը (ծառայությունների ծավալները ընդլայնելու, նոր գործիքները, ծառայությունները ներդնելու, ծառայությունների որակը բարձրացնելու) ապահովելու, պահանջարկը ուսումնասիրելու ուղղությամբ:

1) ՆԸ կանոնադրական կապիտալը գրանցման պահին նախատեսվում է 70 մլն ՀՀ դրամ, իսկ երկրորդ տարում՝ 370 մլն ՀՀ դրամ:

ՆԸ վարչական տարեկան ծախսերը առաջիկա երեք տարիների ընթացքում կազմում են մոտ 37 մլն ՀՀ դրամ: Մասնավորապես՝ ՆԸ կադրերը հիմնականում վարձատրվելու են ԱՆԻՖ-ի կողմից, որտեղ վերջիններս գրանցվելու են համատեղությամբ աշխատանքի: Հետագայում, ՆԸ եկամուտների աճին զուգահեռ, աշխատակիցների և ծառայությունների մատուցման համար վճարները կիրականացվի միայն ՆԸ կողմից:

Հաջորդ հիմնական ծախսային հոդվածը մարքեթինգային ծախսերն են, որը նույնպես իրականացվելու է ԱՆԻՖ ընկերության կողմից: Մարքեթինգային արշավը նախատեսվում է իրականացնել մի քանի ուղղություններով՝

1. ԱՌՖԻ հարթակի գովազդային արշավ սոցիալական հարթակներում և սփյուռքում գտնվող հայտնի հայ գործիչների կողմից:
2. Հարթակի ներդրումային նախագծերի և մասնակից ընկերությունների գովազդային արշավներ/ներդրումային փաթեթի մարքեթինգային լուծումներ, որոնք իրականացվելու են ԱՆԻՖ-ի կողմից:

2) ՆԸ հիմնական ծառայությունը բրաուդֆանդինգի հարթակի սպասարկումն է: Մասնավորապես բրաուդֆանդինգի հարթակով նախատեսվում է իրականացնել ներդրումային բրաուդֆանդինգի ծառայություններ:

2022-2024թթ. ընթացքում նշված ծառայությունների գծով ֆինանսավորված գործարքների քանակի ու գումարի կանխատեսումները հետևյալն են՝

	2022թ.		2023թ.		2024թ.	
	Քանակ	Միջին գումար	Քանակ	Միջին գումար	Քանակ	Միջին գումար
Ներդրումային բրաուդֆանդինգով հաջողված նախագծեր	3	30 մլն ՀՀ դրամ	20	40 մլն ՀՀ դրամ	30	50 մլն ՀՀ դրամ



ՆԸ նախագծերի հաջողության դեպքում նախատեսում է գանձել միջնորդավճար ներգավված գումարի 9% չափով, որից 2% վճարվելու է սպասարկող բանկին որպես ներդրողների կողմից վճարային բարտերով կատարված գործարքների գծով միջնորդավճար:

ՆԸ նաև իրականացնելու է օժանդակ ծառայություններ՝ ՀԿԴ հաշվի օպերատորի ծառայություններ, ֆինանսավորում պահանջող ընկերությունների կազմակերպահրավական ձևի փոփոխության իրավական սպասարկում, ինչպես նաև ներդրումային առաջարկի փաթեթի պատրաստման աջակցություն և այլն: Նշված ծառայությունների համար ՆԸ կարող է գանձել հայտի դիտարկման և ներդրումային առաջարկի պատրաստման միանվագ վճար:

ՆԸ հաճախորդների խմբերը բաժանվում են երկու հիմնական ուղղությունների՝ ֆինանսավորման պահանջ ունեցող ընկերություններ և ներդրողներ: Առաջին խմբի հաճախորդներին հասնելու քայլերը հետևյալն են՝

- Քրաուդֆանդինգի հարթակի մարքեթինգային արշավ սոց ցանցերում
- Բոլոր ստարտափ աքսելերատորների հետ համագործակցություն
- Բոլոր բանկերի հետ համագործակցություն, նշված պահանջներով հաճախորդներին ուղղորդելու նպատակով

Երկրորդ խմբի հաճախորդներին հասնելու քայլերը հետևյալն են՝

- ԱՌՖԻ հարթակի և ԱՆԻՖ-ի գովազդային արշավ՝ ուղղված ներդրողներին արտերկրում
- Հայաստանում գործող վենչուրային ֆոնդերի և խոշոր ներդրողների ներգրավմանն ուղղված քայլեր, միջոցառումներ, հարթակում խոշոր գործարքների հնարավորություն միայն որակավորված ներդրողների համար:
- Առաջին խմբի ընկերությունների հաճախորդի բազայի ներգրավում համատեղ ջանքերով:

3) ՆԸ առաջիկա երեք տարիների ընթացքում նախատեսում է ապահովել հետևյալ ֆինանսական ցուցանիշները՝

Ֆինանսական ցուցանիշ	Առաջին տարի	Երկրորդ տարի	Երրորդ տարի
Չուտ շահույթ/ համախառն ծախսեր	-53%	30%	66%
Չուտ շահույթ/ համախառն ակտիվներ	-16%	5%	10%
Չուտ շահույթ/ համախառն կապիտալ	-16%	5%	10%

Ֆինանսական ցուցանիշների ապահովումը հիմնված է հետևյալ հիմնական ենթադրությունների և պայմանների վրա՝

- Ծախսերի մեծ մասը (աշխատակիցների աշխատավարձ համատեղության, մարքեթինգային ծախսեր, գրասենյակային ծախսեր և այլն) իրականացնում է Ընկերության միակ սեփականատեր ԱՆԻՖ-ը:
- ՆԸ կունենա տարեկան 3-50 հաջողված գործարքներ հարթակում, որոնք կբերեն եկամուտ 6-105 մլն ՀՀ դրամ:



- 4) ՆԸ ունենալու է առավելապես հորիզոնական կառավարման համակարգ՝ կիրառելով իր բաժնետիրոջ փորձը:
- 5) ՆԸ չի նախատեսում կանխատեսվող ժամանակահատվածում բացել առանձին ներկայացուցչություններ արտերկրում՝ փոխարենը հարկ եղած դեպքերում օգտագործելով իր բաժնետիրոջ ներկայացուցչությունների գրասենյակները ՌԴ-ում, Ֆրանսիայում:
Ներկայացուցչությունների ներուժը կօգտագործվի հարթակի մասնակիցների համար խմբային խոշոր ներդրումային արշավների իրականացման ժամանակ:
- 6) Հաշվի առնելով այն որ, ՆԸ կողմից կառավարվող քառուղֆանդինգի հարթակը առաջինն է լինելու Հայաստանում, որոշ կադրերի ներգրավման հարցում ՆԸ նախատեսում է կիրառել հիմնարար գիտելիքներ ունեցող կադրերի ներգրավման և հետագայում ավելի խորը ոլորտային ուսումնասիրության նպատակով վերապատրաստման ճանապարհով:
ՆԸ նախատեսում է նաև օգտագործել իր բաժնետիրոջ կադրային մեծ պոտենցյալը:
- 7) ՆԸ-ն գործարար ծրագրով սահմանված ժամանակաշրջանում նախատեսում է գործարկել և կառավարել «ԱՌՖԻ» քառուղֆանդինգի հարթակ՝ որպես վերջինիս օպերատոր:
Հիմնական օգտագործվող ծրագիրը քառուղֆանդինգի ներդրումային հարթակի տեխնիկածրագրային միջավայրն է, որը ապահովում է քառուղֆանդինգի հարթակի կանոններով նախատեսված գործառույթների տեխնիկական ապահովումը:
Մասնավորապես առկա են հետևյալ ֆունկցիաները՝
- Հաճախորդների առցանց նույնականացում Փողերի Լվացման և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լավագույն ստանդարտներին համապատասխան,
 - Էլ.հասցեների միջոցով ծանուցման ավտոմատացված համակարգ
 - Ֆինանսավորման մոդելների ընտրության լայն հնարավորություններ
 - Ներդրումների իրականացման առցանց հնարավորություն Էլ. ստորագրության կիրառմամբ,
 - Ներդրումների վճարման քարտային և փոխանցման տարբերակների հնարավորություն,
 - Ֆինանսավորվող նախագծերի վերաբերյալ տեղեկատվության բոլոր հնարավոր ֆորմատների կիրառման հնարավորություն (տեսաձայնագրություններ, անիմացիաներ, նկարներ, տեքստ և այլն), ինչպես նաև ֆինանսավորման առաջարկի պարամետրերի ճկունություն (ռեֆերալ ծրագիր, զեղչերի հնարավորություն ըստ օրերի և գումարի և այլն),
 - Հաճախորդների տվյալների պաշտպանության միջազգային ստանդարտներին համապատասխան տվյալների պահպանում ամպային ենթակառուցվածքներում,
 - Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման լավագույն ծրագրային ապահովման կիրառություն,
 - Հարթակի նոր թարմացումների ավտոմատ տեղայնացման համակարգի կիրառություն:

Առաջիկայում նախատեսվում է քառուղֆանդի հարթակի բջջային հավելվածի պատրաստում:

- 8) ՆԸ նախատեսում է իրականացնել լայնամասշտաբ մարքեթինգային քաղաքականություն, ԱՌՖԻ բրենդի ճանաչելիության, նոր ներդրողների շուկաների, տեղական ստարտափների ներգրավման նպատակով:



Այդ ուղղությամբ նախատեսվում է 2022թ. հունիսից արդեն ունենալ վիդեո և այլ մեդիա նյութերի շարք և մասնագիտացված մարքեթինգային ընկերությունների կողմից մշակված մարքեթինգային ռազմավարություն՝ հստակ քայլերի հաջորդականությամբ:

Մարքեթինգային ծախսերն իրականացվելու են ՆԸ սեփականատեր ԱՆԻՖ-ի կողմից:



Բ Ա Ժ Ի Ն V

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ (6-8 էջ)

Գ Լ ՈՒ Խ 12

ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ (1 էջ)

20. Ներկայացնել, թե ինչ կարգով է կատարվում ծրագրի մշակման գործընթացը, ով է կատարում ծրագրի կատարողականի գնահատումը, կատարման հսկողությունը, ինչ գործընթացով է դա իրականացվում:

Գործարար ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել քրաուդֆանդինգի շուկայի միջազգային ուսումնասիրությունները, ԱՆԻՖ-ի կողմից իրականացվող ներդրումային գործունեության ընթացքում տեղական ընկերությունների և օտարերկրյա ներդրողների հետ շփումները, ինչպես նաև այդ ոլորտների վերլուծություններն ու հետազոտությունները:

Գործարար ծրագրի կատարողականի գնահատումը նախատեսվում է իրականացնել Ընկերության խորհրդի կողմից կիսամյակային պարբերականությամբ՝ Ընկերության տնօրենի կողմից կանխատեսվող և փաստացի աշխատանքների արդյունքների մասին ներկայացվող տեղեկատվության հիման վրա:

Ընկերության տնօրենի կողմից պարբերաբար կազմակերպվելու են Ընկերության գործունեության փաստացի ցուցանիշների, կանխատեսվող ցուցանիշների նկատմամբ փաստացի ցուցանիշների շեղումների պատճառների բացահայտման և դրանց վերացմանն ուղղված միջոցառումներ:

Գ Լ ՈՒ Խ 13

ԾՐԱԳՐԻՆ ԿԻՑ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԸ

(5-7 էջ)

21. Ներկայացնել սույն ծրագրին կից հետևյալ աղյուսակները՝

1) կանխատեսվող հաշվեկշիռը՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 1-ի,

2) եկամուտների և ծախսերի կանխատեսումը՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 2-ի,

3) կարգավորվող շուկայում կատարվելիք գործարքների վերաբերյալ կանխատեսումներ՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 3-ի,

4) կարգավորվող շուկայից դուրս կատարվելիք գործարքների վերաբերյալ կանխատեսումներ՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 4-ի,

5) կառավարման վերցրած արժեթղթերի և/կամ դրամական միջոցների վերաբերյալ կանխատեսումներ՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 5-ի,

6) արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 6-ի,

7) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կառավարման արդյունավետության ցուցանիշների կանխատեսումը՝ համաձայն սույն ենթահավելվածի աղյուսակ 7-ի:



Աղյուսակ 1.

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

(հազ. դրամ)

	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-ին պլանավորվող տարվա հուլիսի 1	2-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	2-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	3-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	3-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	4-րդ պլանավորվող տարվա հունվարի 1
1. Ակտիվներ							
1) Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում							
2) Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		70,000	59,747	364,921	374,326	391,324	412,456
3) Պահանջներ հաճախորդների նկատմամբ							
4) Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ							
5) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ							
6) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ							
7) Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում							
8) Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ							
9) Հետաձգված հարկային ակտիվներ							
10) Այլ ակտիվներ							
Ընդամենը՝ ակտիվներ		70,000	59,747	364,921	374,326	391,324	412,456
2. Պարտավորություններ և կապիտալ							



1) Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ							
2) Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ							
3) Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ							
4) Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր							
5) Հետաձգված հարկային պարտավորություններ							
6) Պահուստներ							
7) Այլ պարտավորություններ							
Ընդամենը՝ պարտավորություններ							
3. Կանոնադրական կապիտալ		70,000	70,000	370,000	370,000	370,000	370,000
4. Էմիսիոն եկամուտ							
5. Պահուստներ՝							
1) Գլխավոր պահուստ							
2) Վերազնահատման պահուստներ							
6. Զբաղիված շահույթ (վնաս)		-	(10,253)	(5,079)	4,326	21,324	42,456
7. Կապիտալի այլ տարրեր							
Ընդամենը՝ կապիտալ		70,000	59,747	364,921	374,326	391,324	412,456
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		70,000	59,747	364,921	374,326	391,324	412,456

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

(հազ. դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-ին պլանավորվող տարվա հունիսի 1	2-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	2-րդ պլանավորվող տարվա հունիսի 1	3-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	3-րդ պլանավորվող տարվա հունիսի 1	4-րդ պլանավորվող տարվա հունվարի 1
1. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		-	1,946	6,370	15,980	11,485	23,562
2. Տոկոսային և նմանատիպ ծախսեր							
3. Չուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		-	1,946	6,370	15,980	11,485	23,562
4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		-	7,050	22,500	46,500	35,719	72,375
5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր							
6. Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		-	7,050	22,500	46,500	35,719	72,375
7. Եկամուտ շահաբաժիններից							
8. Չուտ եկամուտ առևտրային գործառնություններից							
9. Այլ գործառնական եկամուտներ							
10. Գործառնական եկամուտներ							
11. Չուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին		-	649	2,123	3,696	3,828	4,019
12. Ընդհանուր վարչական ծախսեր		-	18,600	20,280	40,560	22,128	44,256
13. Այլ գործառնական ծախսեր							
14. Այլ անձանց կանոնադրական կապիտալում							



ներդրումներից զուտ շահույթ (վնաս)							
15. Շահույթը (վնասը) մինչև հարկումը		-	(10,253)	6,467	18,224	21,247	47,662
16. Շահութահարկի զծով ծախս (փոխհատուցում)		-	-	1,293	3,645	4,249	9,532
17. Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)		-	(10,253)	5,173	14,579	16,998	38,130
18. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)		-	(0.21)	0.10	0.29	0.34	0.76
19. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նույնացված շահույթ (վնաս)							

**ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

(հալ. դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵՇՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ		
		1- ԻՆ	2- ՐԴ	3- ՐԴ
1. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ				
1.1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
1.2. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
1.3. ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2. ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՖ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ				
2.1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2.2. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2.3. ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ԸՆԴԱՄԵՆԸ				

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հազ. դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵՇՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐ Ի 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ		
		1-ԻՆ	2-ՐԴ	3-ՐԴ
1. ԻՐ ԿԱՄ ՅԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՅԱՃԱԽՈՐԴԻ ՅԱՇՎԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ				
1.1.ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ		90,000	800,000	1,500,000
1.2. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
1.3. ՅԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2. ԻՐ ՅԱՇՎԻՆ ԵՒ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ				
2.1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
2.2. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				

2.3. ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
ԸՆԴԱՄԵՆԸ		90,000	800,000	1,500,000

Աղյուսակ 5.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐՅՐԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հապ. դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ		
		1- ԻՆ	2- ՐԴ	3- ՐԴ
1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐՅՐԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ (ՀԱՁ. ԴՐԱՄ)				
1.1. ՀՀ ԴՐԱՄՈՎ				
1.2. ԱՅԼ ԱՐԺՈՒՅԹՈՎ				
2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐՅՐԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ (ՀԱՁ. ԴՐԱՄ)				
1.1. ՊԵՏԱԿԱՆ				
1.2. ՈՉ ՊԵՏԱԿԱՆ				

Աղյուսակ 6.

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(հապ. դրամ)

ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՄ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ		ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ					
			1-ԻՆ		2-ՐԴ		3-ՐԴ	
	ԵՐԱՇ- ԽԱՎՈՐ- ՎԱԾ	ՉԵՐԱՇ- ԽԱՎՈՐ- ՎԱԾ	ԵՐԱՇ- ԽԱՎՈՐ- ՎԱԾ	ՉԵՐԱՇ- ԽԱՎՈՐ- ՎԱԾ	ԵՐԱՇ- ԽԱՎՈՐ- ՎԱԾ	ՉԵՐԱՇ- ԽԱՎՈՐ- ՎԱԾ	ԵՐԱՇ- ԽԱՎՈՐ- ՎԱԾ	ՉԵՐԱՇ- ԽԱՎՈՐ- ՎԱԾ
1. ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ				90,000		800,000		1,500,000

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՓԱՍՏԱՑԻ ՄԵՇՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐ		
		1-ԻՆ	2-ՐԴ	3-ՐԴ
1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ <i>2ՈՒՏ ՇԱՅՈՒՅԹԱՍՄԱԽԱՌՆ ԾԱԽՍԵՐ</i>		-53%	30%	66%
2. ՇԱՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ՝ <i>2ՈՒՏ ՇԱՅՈՒՅԹԱՍՄԱԽԱՌՆ ԱԿՏԻՎՆԵՐ</i>		-16%	5%	10%
3. ՇԱՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿԱՊԻՏԱԼԻ՝ <i>2ՈՒՏ ՇԱՅՈՒՅԹ/ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ</i>		-16%	5%	10%
4. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝				
1) ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ ¹		7	7	7
2) ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ ²				
3) ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ/ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ				
5. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝				
1) ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ				
2) 2ՈՒՏ ՇԱՅՈՒՅԹ/ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ		(1,465)	2,083	5,447
6. ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ՝ <i>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ/ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ</i>				

7. ԿԱԴՐԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՒ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ/ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ		443	487	536
8. ՎԱՃԱՌՔԻ ԽԹԱՆՈՒՄ ԳՈՎԱԶԴԻ ԾԱԽՍԵՐ/ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐ				
9. ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝ ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մ ԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՄԲ				

1. ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԲՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ԱՌԵԶՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ:
2. ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԲՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ԶԱՌԵԶՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ (ՕՐԻՆԱԿ՝ ՀԱՎԱՔԱՐԱՐ, ՎԱՐՈՐԴ):